ՍՄԿՊ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

հետևանքների դեմ մեր պարտիայի կողմից կիրառվող միջոցառումները։ Չինաստանի Կոմպարտիայի Կենտկոմի օրգան «Ժենմինժիբաո» թերթը, շարադրելով Չինաստանի Կոմպարտիայի Կենտկոմի Քաղբյուրոյի նիստում ՍՄԿՊ XX համագումարի որոշումների քննարկումից բխող հետևությունները, «Պրոլետարիատի դիկտատուրայի պատմական փորձի մասին» խմբագրական հոդվածում գրել է. «Սովետական Միության Կոմունիստական պարտիան, հետևելով Լենինի պատգամներին, լրջորեն է վերաբերվում սոցիալիստական շինարարության ղեկավարության գործում Ստալինի թույլ տված որոշ լուրջ սխալներին ու դրանց առաջացրած հետևանքներին։ Նկատի ունենալով այդ հետևանքների լրջությունը, Սովետական Միության Կոմունիստական պարտիայի առջև կանգնեց այն հարցը, որ անհրաժեշտ է Ստալինի մեծ ծառայությունները ճանաչելու հետ մեկտեղ ամենայն սրությամբ բացահայտել Ստալինի թույլ տված սխալների էությունը և ամբողջ պարտիային կոչ անել զգուշանալ դրա կրկնումից, վճռականապես արմատախիլ անել այդ սխալների առաջացրած անառողջ հետևանքները։ Մենք, Չինաստանի կոմունիստներս, խորապես հավատում ենք, որ ՍՄԿՊ XX համագումարում ծավալված սուր քննադատությունից հետո այն բոլոր ակտիվ գործոնները, որոնք քաղաքական որոշ սխալների պատճառով անցյալում ուժեղ կերպով կասեցվում էին, անպայման ամենուրեք շարժման մեջ կմտնեն, որ Սովետական Միության Կոմունիստական պարտիան ու սովետական ժողովուրդը առաջվանից ավելի միասնական ու համախմբված կլինեն մարդկության պատմության մեջ չտեսնված՝ կոմունիստական մեծ հասարակարգի կառուցման համար, ամբողջ աշխարհի կայուն խաղաղության համար մղվող պայքարում»։

«Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ղեկավարների ծառայություններն այն են,— ասված է Ֆրանսիայի Կոմպարտիայի Քաղբյուրոյի հայտարարության մեջ,— որ նրանք ձեռնարկեցին անհատի պաշտամունքի հետ կապված սխալների ու թերությունների շտկումը, որը վկայում է Լենինի մեծ պարտիայի ուժն ու միասնությունը, այն վստահությունը, որ նա վայելում է սովետական ժողովրդի մեջ, ինչպես նաև նրա հեղինակությունը միջազգային բանվորական շարժման մեջ»։ ԱՄՆ-ի Կոմպարտիայի ազգային կոմիտեի գլխավոր քարտուղար ընկեր Յուջին Դեննիսը, նշելով ՍՄԿՊ XX համագումարի հսկայական նշանակությունը, իր հայտնի հոդվածում հայտարարում է. «XX համագումարը ամրապնդեց ընդհանուր խաղաղությունն ու սոցիալական պրոգրեսը։ Նա նոր ստադիա նշանավորեց սոցիալիզմի զարգացման գործում և խաղաղ գոյակցության պայքարում, որն սկսվեց Լենինի ժամանակներում, շարունակվեց հետագա տարիներին և գնալով ավելի ներգործուն ու հաջող է դառնում»։

Դրա հետ միասին պետք է նշել, որ անհատի պաշտամունքի հարցը քննության առնելիս միշտ չէ, որ ճիշտ մեկնաբանություն է տրվում անհատի պաշտամունքին ծնունդ տված պատճառներին և մեր հասարակարգի համար այդ պաշտամունքի հետևանքներին։ Այսպես, օրինակ, «Նուովի արգոմենտի» ժուռնալին ընկեր Տոլյատտիի տված հանգամանալից ու հետաքրքրական ինտերվյուի մեջ չափազանց կարևոր ու ճիշտ շատ հետևությունների հետ միասին կան նաև ոչ-ճիշտ դրույթներ։ Մասնավորապես, չի կարելի համաձայնել ընկեր Տոլյատտիի այն հարցադրմանը, թե արդյոք սովետական հասարակարգը չի՞ հասել այլասերման որոշ ձևերի։ Այսպիսի հարցադրման համար ոչ մի հիմք չկա։ Դա առավել ևս անհասկանալի է, որ իր ինտերվյուի մի այլ տեղում ընկեր Տոլյատտին միանգամայն ճիշտ կերպով ասում է. «Անհրաժեշտ է այն հետևությունն անել, որ սոցիալիստական կարգի էությունը չի կորել, քանի որ չեն կորել նախորդ նվաճումներից ոչ մեկը և ամենից առաջ այդ կարգերի պաշտպանությունը սովետական հասարակությունը կազմող բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի մասսաների կողմից։ Հենց այդ պաշտպանությունն ինքնին ապացուցում է, որ, անկախ որևէ բանից, այդ հասարակությունը պահպանել է իր հիմնական դեմոկրատական բնույթը»։

Իսկապես, առանց ժողովրդական ամենալայն մասսաների կողմից Սովետական իշխանության, Կոմունիստական պարտիայի քաղաքականության պաշտպանության մեր երկիրը չէր կարող չտեսնված կարճ ժամկետում ստեղծել սոցիալիստական հզոր ինդուստրիա, իրագործել գյուղատնտեսության կոլեկտիվացումը, նա չէր կարող հաղթանակ տանել երկրորդ համաշխարհային պատերազմում, որի ելքից կախված էր ամբողջ մարդկության բախտը։ Հիտլերիզմի, իտալական ֆաշիզմի և յապոնական միլիտարիզմի լրիվ ջախջախման հետևանքով լայն զարգացում ունեցան կոմունիստական շարժման ուժերը, աճեցին ու մասսայական դարձան Իտալիայի, Ֆրանսիայի և կապիտալիստական այլ երկրների կոմպարտիաները, ժողովրդական դեմոկրատիայի կարգ հաստատվեց Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրներում, առաջացավ և ամրապնդվեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, չտեսնված հաջողությունների հասավ ազգային-ազատագրական շարժումը, որը հանգեցրեց իմպերիալիզմի գաղութային սիստեմի քայքայմանը։

IV

Միաժամանակ հավանություն տալով ՍՄԿՊ XX համագումարի որոշումներին, որոնցով դատապարտվում է անհատի պաշտամունքը, կոմունիստները, բոլոր սովետական մարդիկ դրանցում տեսնում են մեր պարտիայի, նրա լենինյան սկզբունքայնության, նրա միասնության ու համախմբվածության աճած ուժի վկայությունը։ «Ռևոլյուցիոն պրոլետարիատի պարտիան,— նշել է Վ. Ի. Լենինը,— բավականաչափ ուժեղ է, որպեսզի բացահայտորեն քննադատի ինքն իրեն, որպեսզի առանց այլևայլության սխալն ու թուլությունն անվանի սխալ ու թուլություն» (Երկեր, հատ. 21, էջ 207)։ Ղեկավարվելով լենինյան այդ սկզբունքով, մեր պարտիան այսուհետև էլ համարձակորեն կբացահայտի, բացեիբաց կքննադատի և վճռաբար կվերացնի իր աշխատանքի սխալներն ու վրիպումները։

ՍՄԿՊ Կենտկոմը գտնում է, որ անհատի պաշտամունքի և դրա հետևանքների հաղթահարման ուղղությամբ պարտիայի կողմից մինչև այժմ կատարված աշխատանքը արդեն դրական արդյունքներ է տվել։

Ելնելով պարտիայի XX համագումարի որոշումներից, ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեն պարտիական բոլոր կազմակերպություններին կոչ է անում.

մեր ամբողջ աշխատանքում հետևողականորեն պահպանել ժողովրդի՝ որպես պատմության կերտողի, որպես մարդկության նյութական ու հոգևոր բոլոր հարստությունների ստեղծողի մասին, հասարակության վերափոխման համար, կոմունիզմի հաղթանակի համար մղվող ռևոլյուցիոն պայքարում մարքսիստական պարտիայի վճռական դերի մասին մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի կարևորագույն դրույթները,

հաստատակամորեն շարունակել բոլոր պարտիական կազմակերպություններում՝ վերից վար, պարտիական ղեկավարության լենինյան սկզբունքների, ամենից առաջ, բարձրագույն սկզբունքի՝ կոլեկտիվ ղեկավարության խստիվ պահպանման, պարտիական կյանքի՝ մեր պարտիայի Կանոնադրությամբ սահմանված նորմաների պահպանման, քննադատության և ինքնաքննադատության ծավալման ուղղությամբ վերջին տարիներս պարտիայի Կենտրոնական Կոմիտեի կատարած աշխատանքը,

լրիվին վերականգնել Սովետական Միության Կոնստիտուցիայում արտահայտված սովետական սոցիալիստական դեմոկրատիզմի սկզբունքները, մինչև վերջ ուղղել ռևոլյուցիոն սոցիալիստական օրինականության խախտումները,

մեր կադրերին, բոլոր կոմունիստներին և աշխատավորների ամենալայն մասսաներին մոբիլիզացնել պայքարելու վեցերորդ հնգամյա պլանի խնդիրների պրակտիկ իրականացման համար, այդ նպատակով ամեն կերպ զարգացնելով պատմության իսկական կերտողների՝ մասսաների ստեղծագործական նախաձեռնությունը և եռանդը։

ՍՄԿՊ XX համագումարը նշեց, որ մեր դարաշրջանի կարևորագույն գիծը սոցիալիզմի վերածումն է համաշխարհային սիստեմի։ Սոցիալիզմի զարգացման ու հաստատման ամենադժվարին շրջանը մնացել է հետևում։ Մեր սոցիալիստական երկիրը դադարել է կապիտալիստական պետությունների օվկիանոսում մենավոր կղզի լինելուց։ Այժմ սոցիալիզմի դրոշի ներքո նոր կյանք է կառուցում ամբողջ մարդկության ավելի քան մեկ երրորդը։ Սոցիալիզմի գաղափարները տիրապետում են կապիտալիստական երկրների միլիոնավոր ու միլիոնավոր մարդկանց մտքերին։ Վիթխարի է սոցիալիզմի գաղափարների ներգործությունը Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի ժողովուրդների վրա, որոնք հանդես են գալիս գաղութակալության բոլոր ձևերի դեմ։

ՍՄԿՊ XX համագումարի որոշումները խաղաղության ու սոցիալիզմի բոլոր կողմնակիցների, դեմոկրատական ու պրոգրեսիվ բոլոր շրջանների կողմից ընկալվում են որպես ամբողջ աշխարհի խաղաղության ամրապնդման համար, բանվոր դասակարգի շահերի համար, սոցիալիզմի գործի հաղթանակի համար պայքարի ոգեշնչող ծրագիր։

Արդի պայմաններում կոմունիստական պարտիաների և ամբողջ միջազգային բանվորական շարժման առջև բացվում են լայն ոգեշնչող հեռանկարներ՝ բոլոր խաղաղասեր ուժերի հետ միասին հասնել նոր համաշխարհային պատերազմի կանխմանը, սանձահարել մոնոպոլիաներին և ապահովել տևական խաղաղություն ու ժողովուրդների անվտանգություն, դադարեցնել սպառազինությունների մրցավազքը և աշխատավորների ուսերից թոթափել այդ մրցավազքի ծնունդ տված հարկերի ծանր բեռը, պաշտպանել դեմոկրատական իրավունքներն ու ազատությունները, որոնք աշխատավորների համար ապահովում են պայքարը հանուն իրենց լավագույն կյանքի և լուսավոր ապագայի։ Հենց դրանով էլ կենսականորեն շահագրգռված են միլիոնավոր հասարակ մարդիկ աշխարհի բոլոր երկրներում։ Այդ պրոբլեմների հաջող լուծմանը վիթխարի չափով նպաստում են Սովետական Միության, Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի և սոցիալիզմի ուղիով ընթացող մյուս բոլոր երկրների խաղաղասիրական քաղաքականությունը, նրանց նորանոր հաջողությունները։

Պատմական նոր պայմաններում իրենց գործունեությունը դադարեցրել են բանվոր դասակարգի այնպիսի միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են Կոմինտերնը և Կոմինֆորմը։ Բայց այստեղից բնավ չի հետևում, թե մարքսիզմ-լենինիզմի դիրքերում կանգնած եղբայրական ռևոլյուցիոն պարտիաների ինտերնացիոնալ համերաշխությունը և նրանց կոնտակտների անհրաժեշտությունը կորցրել են իրենց նշանակությունը։ Ներկայումս, երբ ամբողջ աշխարհում անչափելիորեն աճել են սոցիալիզմի ուժերը և սոցիալիզմի գաղափարների ազդեցությունը, երբ դրսևորվում է զանազան երկրներում սոցիալիզմ տանող ուղիների յուրօրինակությունը, բանվոր դասակարգի մարքսիստական պարտիաները, բնականաբար, պետք է պահպանեն և ամրապնդեն իրենց գաղափարական միասնությունն ու եղբայրական ինտերնացիոնալ համերաշխությունը նոր պատերազմի սպառնալիքի դեմ մղվող պայքարում, մոնոպոլիստական կապիտալի հակաժողովրդական ուժերի դեմ մղվող պայքարում, որոնք ձգտում են ճնշել ռևոլյուցիոն և պրոգրեսիվ բոլոր շարժումները։ Կոմունիստական պարտիաներին համախմբում է կապիտալի ճնշումից բանվոր դասակարգի ազատագրման մեծ նպատակը, նրանց ի մի է շաղկապում հավատարմությունը մարքսիզմ-լենինիզմի գիտական իդեոլոգիային, պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգուն, անսահման նվիրվածությունը ժողովրդական մասսաների շահերին։

Արդի պայմաններում իրենց գործունեության մեջ բոլոր կոմունիստական պարտիաները ելնում են յուրաքանչյուր երկրի ազգային առանձնահատկություններից ու պայմաններից, ամենայն լիակատարությամբ արտահայտելով իրենց ժողովուրդների ազգային շահերը։ Ընդսմին, գիտակցելով, որ բանվոր դասակարգի շահերի համար, խաղաղության և իրենց երկրների ազգային անկախության համար մղվող պայքարը միաժամանակ ամբողջ միջազգային պրոլետարիատի գործն է, նրանք համախմբվում և ամրապնդում են իրենց կապերն ու համագործակցությունը։ Տարբեր երկրների բանվոր դասակարգի մարքսիստական պարտիաների գաղափարական համախմբումը և եղբայրական համերաշխությունը ավելի անհրաժեշտ են, մանավանդ որ կապիտալիստական մոնոպոլիաները ստեղծում են ՆԱՏՕ-ի, ՍԵԱՏՕ-ի, Բաղդադի պակտի նման միջազգային ագրեսիվ միավորումներ ու բլոկներ՝ ուղղված խաղաղասեր ժողովուրդների դեմ, ազգային-ազատագրական շարժման դեմ, բանվոր դասակարգի դեմ և աշխատավորների կենսական շահերի դեմ։

Այն ժամանակ, երբ Սովետական Միությունը շատ բան է արել և անում միջազգային լարվածությունը թուլացնելու համար,— և դա այժմ խոստովանում են բոլորը,— այդ նույն ժամանակ ամերիկյան մոնոպոլիստական կապիտալը շարունակում է խոշոր գումարներ հատկացնել սոցիալիստական երկրներում քայքայիչ գործունեությունը ուժեղացնելու համար։ Ինչպես հայտնի է, «սառը պատերազմի» թեժ պահին ամերիկյան կոնգրեսը պաշտոնապես (բացի այն միջոցներից, որոնք բաց են թողնվում ոչ-պաշտոնապես) 100 միլիոն դոլար հատկացրեց ժողովրդական դեմոկրատիայի երկրներում և Սովետական Միությունում քայքայիչ գործունեության համար։ Այժմ, երբ Սովետական Միությունը և սոցիալիստական մյուս երկրները հնարավոր ամեն ինչ անում են միջազգային լարվածությունը թուլացնելու համար, «սառը պատերազմի» կողմնակիցները ճգնում են ակտիվացնել ամբողջ աշխարհի ժողովուրդների կողմից դատապարտված «սառը պատերազմի» գործողությունները։ Այդ է վկայում ամերիկյան սենատի որոշումը քայքայիչ գործունեության համար լրացուցիչ կերպով 25 միլիոն դոլար հատկացնելու մասին, որը ցինիկորեն անվանվում է «ազատության խրախուսում» «երկաթե վարագույրի» այն կողմում։

Մենք պետք է հաստատակամորեն գնահատենք այս փաստը, և դրանից անենք համապատասխան հետևություններ։ Օրինակ, պարզ է, որ Պոզնանում առաջացած հակաժողովրդական ելույթները վարձատրված են այդ աղբյուրից։ Սակայն անդրօվկիանոսյան դրամական ֆոնդերից վարձատրված պրովոկատորները և դիվերսանտները դիմացան միայն մի քանի ժամ։ Պոզնանի աշխատավորները հակահարված տվեցին թշնամական ելույթներին ու պրովոկացիաներին։ Ձախողվեցին «թիկնոցի ու դաշույնի» մութ ասպետների պլանները, ձախողվեց Լեհաստանի ժողովրդական իշխանության դեմ ուղղված նրանց նողկալի պրովոկացիան։ Այսուհետև էլ այդպես կձախողվեն քայքայիչ գործողությունները ժողովրդական դեմոկրատիայի երկրներում, թեև այդօրինակ գործողությունները առատաձեռն վարձատրվում են ամերիկյան մոնոպոլիաների կողմից հատկացվող գումարներից։ Կարելի է ասել, որ դրանք զուր վատնված փողեր են։

Այս ամենը վկայում է, որ չի կարելի անհոգությամբ թույլ տալ իմպերիալիստական գործակալների նոր մեքենայությունների վերաբերմամբ, որոնք ձգտում են ներթափանցել սոցիալիստական երկրները, որպեսզի վնաս հասցնեն և քայքայեն աշխատավորների նվաճումները։

Իմպերիալիստական ռեակցիայի ուժերը ճգնում են աշխատավորներին շեղել իրենց շահերի համար մղվող պայքարի ճիշտ ուղուց, նրանց հոգին թունավորել խաղաղության ու սոցիալիզմի գործի հաջողության նկատմամբ թերահավատության թույնով։ Հակառակ կապիտալիստական մոնոպոլիաների գաղափարախոսների բոլոր մեքենայություններին, բանվոր դասակարգը փորձված կոմունիստական ավանգարդի գլխավորությամբ կընթանա իր ճանապարհով, որը հասցրել է սոցիալիզմի պատմական նվաճումների և կհասցնի խաղաղության, դեմոկրատիայի ու սոցիալիզմի գործի նոր հաղթանակների։ Կարելի է վստահ լինել, որ բոլոր երկրների կոմունիստական ու բանվորական պարտիաները է՛լ ավելի բարձր կպահեն պրոլետարական ինտերնացիոնալիզմի մարքսիստական պանծալի դրոշը։

Սովետական մարդիկ օրինական կերպով հպարտանում են, որ մեր Հայրենիքը առաջինը հարթեց սոցիալիզմի ուղին։ Այժմ, երբ սոցիալիզմը դարձել է համաշխարհային սիստեմ, երբ սոցիալիստական երկրների միջև հաստատվել է եղբայրական համագործակցություն ու փոխադարձ օգնություն, բարենպաստ նոր պայմաններ են ստեղծվել սոցիալիստական դեմոկրատիայի ծաղկման համար, կոմունիզմի նյութական-արտադրական բազայի հետագա ամրապնդման, աշխատավորների կենսամակարդակի անշեղ բարձրացման համար, կոմունիստական հասարակարգ կառուցող նոր մարդու անհատականության բազմակողմանի զարգացման համար։ Թող որ բուրժուական գաղափարախոսները առասպելներ հորինեն կոմունիզմի «ճգնաժամի», կոմունիստական պարտիաների շարքերում «վարանումների» մասին։ Թշնամիներից այդօրինակ գուշակություններ լսելը մեզ համար նորություն չէ։ Նրանց նախագուշակությունները միշտ էլ պայթել են օճառի պղպջակի նման։ Այդ ձախորդ գուշակները եկել են ու չքացել, իսկ կոմունիստական շարժումը, մարքսիզմ-լենինիզմի անմահ ու կենարար գաղափարները հաղթանակել և հաղթանակում են։ Այդպես կլինի նաև այսուհետև։ Մեր թշնամիների ոչ մի չարամիտ, զրպարտչական հարձակում չի կարող կանգնեցնել մարդկության պատմական զարգացման անհաղթահարելի ընթացքը դեպի կոմունիզմ։

30 հունիսի 1956 թվականի.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ